Արձանագրություն N 5
«ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/3-Ա» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 14 մայիսի 2021թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Ալոյանը (ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ Ա. Սիմոնյան, Ս. Միրոյանը (ԳԱ) և Տ Բոյախչյանը (ԲԱ):

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Համաձայն «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/3-Ա» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 կետի՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը (11.05.2021թ..) և մասնակիցներին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 12.05.2021թ. շտկել անհամապատասխանությունները.

Մասնակից կազմակերպությունների կողմից 12.05.2021թ. անհամապատասխանությունները շտկվել են, սակայն «Ղարաբաղցյան-Շին» ՍՊԸ-ի կողմից հաստատված ծավալաթերթ-նախահաշվում հաշվի չեն առնվել սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները, ինչպես նաև Հավելված 1.1-ը (սարքեր և սարքավորումների նկարագիր) թերի՝ որպես կոմերցիոն հաշվառման նպատակով կիրառելի սարքավորումներ տեխնիկական բնութագրերում նշված չէ չափիչ սարքավորումների չփման ճշտության աստիճանները

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. «Ղարաբաղցյան-Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել՝ հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխանության հիմքով.

2. Հիմք ընդունելով ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/3-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 կետը հանձնաժողովը ընթացակարգի մասնակից «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ին և «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին հրավիրում է գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա 19.05.2021 թվականին ժամը 11:00-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Գ. Ալոյան
անդամներ	_____	Ա. Սիմոնյան
	_____	Ս. Միրոյան
	_____	Տ. Բոյախչյան
Քարտուղար	_____	Ա. Սարգսյան